# ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ԹԻՎ 1 ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 1 որոշման վերնագրում, նախաբանում և որոշման մեջ առկա են կրճատ գրառված բառեր (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս, համաձայն որի արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ):

Բացի այդ, որոշման նախաբանում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի դրույթներին կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:

ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության դրույթներին կատարված հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, համաձայն որի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, ակտի վերնագիրը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը: Բացի այդ, անհրաժեշտ է նշել, թե վերը նշված կանոնադրության որդրույթի հիման վրա է համայնքի ղեկավարի որոշումն ընդունվել (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս):

Թիվ 2 որոշման վերնագրում և որոշման մեջ «2020 թվականի բյուջեի» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «կատարման» բառը, իսկ «եռամսյա համամասնությունները» բառերից հետո գրառված «հաստատելու» բառն անհրաժեշտ է փոխարինել «սահմանելու» բառով:

Բացի այդ, որոշման նախաբանում «2020 թվականի հունվարի 20-ի» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «թիվ» բառը:

Որոշման մեջ «Հայաստանի Հանրապետության» բառերից առաջ գրառված «հաստատել» բառն անհրաժեշտ է փոխարինել «սահմանել» բառով: Որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին:

*Կատարող՝ Շ.Շաքարյան*
*06.03.2020թ.*